

Handwritten text: "a l'antenne Amoyan", "J. Leclercq aristographe 4)", "Autrich", "Vienne"

# ԱՐՁԱՆՅՄ

Կ Ի Ս Ա Շ Ա Ր Ա Ռ Ա Ռ Ե Ր Թ

ԱՋԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԻ ՉՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱՔ ՕՐԵՐԸ

ՔԱՆ ՓԱՐԱՑ ՈՂՋ

ՇԱՐԱՔ

Խմբագրության գրասենյակը Եգիպտոսի գրասենյակից ուղղակի կապով կապված է

Rédaction du Journal

ARCHALOUYCE

Le Caire (Egypte)

Խմբագրության ուղղում գրասենյակից կապով կապված է

Թի 408

## ՍԱՀՈՒԱՆԵ ԵՏԲԸ - ԻՆՆՁ

Վերջին լուսերու գիտություն (հսկա-  
բոլոմի), և կամ՝ ինչ որ նոյն է՝ մահուան,  
մեռելոց յարութեան, վերջին ընդհանուր  
գատասանի, երկինքի և դժոխքի վերա-  
բերեալ գրութիւնք երբէք չեն գաղբիւր  
ուշաքրութիւն գրաւելէ. էրիկմարդոց եւ  
կանանց ստուար մեծամասնութիւն մը եր-  
բեմն կը գտնեն զիրենք չափազանց հետա-  
քրքրութեան, եթէ ոչ ա՛ն ու ստիպուած  
մէջ, նկատմամբ իրենց վիճակին՝ երբ բաժ-  
նուին այս աշխարհէն:

Ազգայ կեանքին բուն պայմաններուն  
գաղտնիքը, անշուշտ, ենթադրութիւն մը  
ըլլալէ անդին չեն անցնիր, թէեւ իբրև  
Քրիստոնեայք՝ վստահ ենք թէ այն Աստ-  
ուածութիւնը որ ունի մեր յուսոյն երաշ-  
խաւորութիւնը՝ պիտի պահէ իւր սուրբ  
խօսքը: Մարդ մը որ կրօնք չունի, յիշա-  
ւի, արգահատելի է, սակայն չկայ աւելի  
արգահատելի մէկը քան այն խեղճ վեհե-  
րոտ մարդը որ կը տանջուի Նլային սոս-  
կումով մը մահուանէն: Այսպիսի մէկը  
ընդհանրապէս պատճառ մը ունի իւր վա-  
խուս համար՝ յաճախապէս իւր խղճի  
խայթիլն է որ կը տանջէ զինք: Մահուան  
ստիպումը՝ պատժուելու կասկածը՝ եր-  
բէք չգիտցուիր բարի, պարկեշտ, և ար-  
դարութիւնը սիրող մարդու մը կողմանէ:  
Ճամբորտ Քրիստոնեայ մը կը հնազանդի իւր  
խղճին, և ատով կը բաւականանայ: Ուղ-  
ղութեամբ ապրելը կ'ընէ մարդուն խղճը  
խաղաղ և հանդարտ՝ այս կեանքին մէջ,  
և անխոյժ և անտարբեր մահուան համար:

Միւս կողմանէ՝ կը գտնուին կարգ մը  
մարդիկ՝ որոնց համար միտքը և նիւթը չեն  
տարբերիր իրարմէ, և որոնք համար ներ-  
կայ կեանքը մարդուն գիտակից գոյու-  
թեան Ալլիան և Օմէլլան, սկիզբը և վար-  
ճանն է: Նիւթապայտութեան փրկութիւն-  
յութեան սոյն հետեւողներուն համար՝ ի-  
մացականութիւնը, զգացողութիւնը, խըճ-  
մտանքը, ազատ կամեցողութիւնը, և ինչ,  
նիւթի յատկութիւններ են միայն, կամ՝  
կազմութեան կենսական գործաւորութիւն-  
ները, և կամ փոփոխելի զօրութեան մը  
փոփոխութիւնները: Եթէ ներքին գիտակ-  
ցութեան երեւոյթները վերածուին նիւթի  
և զօրութեան փոփոխութիւններուն, այ-  
սինքն՝ եթէ անոնք վերջապէս վերադարձին  
չարժան մի ձեւին, ան ատեն բոլոր վըճ-  
ուական և հարկաւոր ճշմարտութիւնը ան-  
կարելի կ'ըլլայ, պարտքը չունենար բա-  
ցարձակ պարտաւորութիւն մը, խղճմտանքը  
կեղծիք մը, ներքին գիտակցութիւնը պատ-  
րանք մը, և ազատ կամեցողութիւնը անտե-  
ղի բան մը կ'ըլլայ: Այսպէս՝ բոլոր ճշմար-  
տութիւնը և պարտականութիւնը, բոլոր  
առաքինութիւնը և յոյսը, բոլոր բարոյա-  
կանութիւնը և կրօնքը պիտի լուծուէր և  
պիտի լքանուէր: Մեզ կը թուի թէ՛ բա-  
ցատրել նիւթը մտքի միջոցաւ, և զօրու-  
թիւնը և կարգը և կանոնը իմացականու-

թեան և կամքի միջոցաւ՝ պատշաճ և բա-  
նաւոր է, բայց բացառել միտքը, կամ-  
քը, ներքին գիտակցութիւնը իբրև մէջ  
մէկ ձեւեր նիւթի, կամ զօրութեան՝ ան-  
հեթեթ և անտեղի է: Ուղմտութիւնը կը  
համաձայնի առաջին ենթադրութեան հետ,  
և չկրնար համաձայնիլ երկրորդին հետ:  
Ճանչցուած է թէ մարդու հոգին միմիայն  
է ազատ և ինքնիշխան պատճառը՝ նիւթը  
ճանչցուած չէ այսպէս, ատկա ճանչցուած  
է ըլլալ իբրև միջնորդ զօրութեան, և  
զօրութիւնը ճանչցուած է ըլլալ միշտ ցըր-  
ուածի ընթացքին մէջ: Իմացականութիւնը  
ընդունուած է ըլլալ կարգ և կանոնի և  
կազմակերպութեան բուն պատճառը, կազ-  
մակերպութիւնը՝ կարելի չէ ըմբռնել թէ՛  
իմացականութեան բուն պատճառն է:

Երբ կը հասնինք քաջախոհութեան հա-  
սակին՝ կը զգանք ամէն տեղ երկու՝ իրա-  
բու հետ սերտիւ կապուած սակայն միշտ  
իրարմէ որոշ և անշատ՝ երեւոյթներու զա-  
սակարգերուն գոյութիւնը՝ մտածութեան,  
զգացողութեան, և կամ գոյութիւնը մէկ  
կողմէն, և տարածուած անշարժութեան,  
և ինչ գոյութիւնը միւս կողմէն: Այսպի-  
սինք վերլուծել զանոնք որքան որ կըր-  
նանք, երբէք չենք կրնար վերածել  
մէկը միւսին: Մէկ գասակարգը կողմանք  
ճանչնալու ներքին գիտակցութեան միջո-  
ցաւ, իսկ միւսը՝ մեր զգայարանաց միջո-  
ցաւ, և մէկուն գոյութիւնը գիտենք այն-  
քան ուղղակի կերպիւ և այնքան ստուգու-  
թեամբ՝ որքան միւսինը: և որովհետեւ ան-  
կարող ենք վերածել մէկը միւսին, մէկ  
գասակարգը կը վերագրենք էութեան մը  
զոր կ'անուանենք հոգի, իսկ միւս գասա-  
կարգը կը վերագրենք գոյացութեան մը  
զոր կ'անուանենք նիւթ:

Ի՞նչ հոգին անմահ է, և հետեւաբար  
կը շարունակէ իւր գոյութիւնը մահուանէ  
ետքը՝ յայտնի է հետեւեալ լու գիտցուած  
փաստերէն:

Թէեւ ո եւ է արարածի մը շարունա-  
կական գոյութիւնը պէտք է կախում ու-  
նենայ մի միայն ատոր Արարչին կամքէն,  
այսու ամենայնիւ՝ այդ կամքը կրնայ մեզ  
ճանօթացուիլ՝ կամ ուղղակի յայտնու-  
թիւնով մը, և կամ եզրակացուիլ՝ ո եւ է  
մասնաւոր դէպքի մը մէջ՝ վերաբանական  
կամ համեմատական առարկութեամբ այն  
դէպքերէն՝ որոնց մէջ իր արարչները գիտ-  
ցուած են: Այս վերաբերական փաստը կամ  
առարկութիւնը որոշապէս և վճռական կեր-  
պիւ կը յարմարի այն կարծիքին թէ՛ հո-  
գեւոր էութիւն մը, իբրև այսպիսի բան  
մը, անմահ է: Մեր բոլոր փորձառութեանց  
ընթացքին մէջ անկարող ենք տեղեկանալ  
թէ՛ ո եւ է ոչնչացման պարագայ մը տեղի  
կունենայ նիւթի հիւլէններէն այսինքն՝ նիւ-  
թէն իբրև այսպէս: Նիւթեղէն մարմն-  
ները, գործարանաւոր կամ քիմիականա-  
պէս բազաբեալ, կամ պարզապէս մեքե-  
նական հաւաքումներ, կը տեսնենք թէ՛  
անընդհատ գոյութեան կողման, և ապա  
կ'անհետանան, սակայն առանց ոչնչացու-  
մի ենթարկուելու իրենց տարրական մա-

տանցը մէջ, այլ միայն իբրև արդիւնք կազ-  
մալուծման այդ մասերուն իրարու հետ  
առժամապէս ունեցած առնչութիւնէն և յա-  
րաբերութիւնէն: Հոգին, սակայն, պարզ և  
առանձին է, և հետեւաբար՝ անընդունակ  
մասերու այդ կազմալուծման՝ որուն են-  
թակայ են նիւթական մարմինները: Հե-  
տեւաբար՝ կ'ընդակացնենք թէ հոգին երբ  
անմահ են քանի որ անոնք անընդունակ  
են մահուան այն մի միայն ձեւին որու  
մասին ունինք ո եւ է ծանօթութիւն մը:

ՏՕՔԹ. Ս. Վ. ԵՆԵՎԻԷԼԵԱՆ  
(Մնացեալը յաջորդ քառով)

## ԿԵՍ ԳՅԵՇԵՐԻՆ

Մինչդեռ անդին, հոգին երբ խաղաղիկ,  
կը մտնեն յոյսերու մէջ սիրունակ,  
ես դեռ արթուն, մութին՝ սուգին պէս լըռիկ,  
կէս գիշերին կը հետեւիմ, միս մինակ:

Ես խոսիմք մը՝ ես ալ վիշտ մը տրտմաս  
ուէր,  
կէս գիշերին, կը փնտրեմ, խօսերու՝  
Սիրոյս խորը, սխուր, մըթին, գաղվաւեր,  
նորը՝ աւաղ, զրուած կորած յոյսերուս:

Ես դեռ արթուն, նօճիկներէն թափփրիւմ,  
Սեւ մուլ մը, կը թափառիմ խօզազին,  
Մինչ հեռուէն խուլ զօղանջներ երկիւղած,  
Ալ ինձ կ'երգեն երգը՝ սիրոյս ուրախին:

ԱՐՏԱՇԷՍ ՄՄՐԵԱՆ  
22 Ապրիլ 1903

## 2 Ի Մ Ն Ս Ց

Աբրահամ Այվազեանին պէս ամեն տարի  
երուսաղէմ աւետի գագոց չի մնաց:

Գէթ իրենց պակասութիւնները նկատի  
առնելով՝ արձարաններուն մէջ ուրիշները չի  
բամբասող, որչափ մարդ չի մնաց:

Ազգաբնակիցներուն յաճախակի յա-  
րուցած աղմուկներէն, մեր խեղճ առաջնորդին  
խելապատակին մէջ խելք չի մնաց:

Ազգային ժողովներու մէջ հայերէն լեզուն  
հասկցող ժողովական այ չի մնաց:

Երուսաղէմայ միաբանութեան մէջ՝ իրա-  
բու ֆօթիք չի քաշող միաբան չի մնաց:

Աղեքսանդրիա հրատարակուող «Փրինկ»  
օրաթերթին հետեւը պիտի չի մնաց:

Մօսայի ետեւէն չի վազող կին մը իսկ չի  
մնաց:

Իրենց թեմերը խղճի մտքը կառավարող  
անշահախնդիր թեմական մը չի մնաց:

Գոնէ մի քանի մեթր տանթէլ գողնալով  
բաւականացող, խղճամիտ մօսխար չի մնաց:

Անցեալները հորեզանի վրայ փայլող  
խմբագիրներու հաւաքածոյին, նշոյլը անգամ  
չի մնաց, (Մ. Խ. աստուած նորէն տայ նորէն  
խնայցնել):

Ազգին կալուածները ու եկամուտները ի-  
րեն հաւոյն չի շահագործող ժողովական չի  
մնաց:

Սուտանցի վիճակներուն նմանելու համար,  
վզերուն գոնէ ճիղ մը պունճուիլ չանցունող  
կին չի մնաց:

Անշահախնդիր բարեկամութիւն չի մնաց:  
Հին բարի ժամանակներուն պէս ձրի խոս-  
տովանաճար չի մնաց:

ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԻՆ  
Ծ. ՊՈՊՈՍԵԱՆ

Դրամ պարտեցող հոմակները  
պէտք է սեղիկ կեանքով կոտորել

H. TROSSIAN  
Direct. - propr. du journal Arménien  
ARCHALOUYCE  
LE CAIRE (EGYPTE)

ԱԶԳԱՐԱՐԹԻԻԿ  
Կանխիկ վճարելի են:

Մարմինային մէջ բարաւոր թաղուելու  
տեղ չի մնաց:  
Գոնիքին մէջ կղերականները շատնալուն  
պատճառաւ աշխարհականներուն ա՛լ տեղ չի  
մնաց:  
Սեղաբ Օտապալանին պէս ալ շոշոր  
ազգասէր չի մնաց:  
ԱՅՐԻՔԻՆ

## ԱՆԿՈՂՄՆԱԿԱՆԵՐՈՒ ԿԱՐԹԻԸ

Ծանօթ ամերիկացի հայաստան գրող Գրիգոր  
Օր. Ալիս Սթոն Պէքուէլ հետեւեալը զրկած է  
հայ թերթերուն ի հրատարակութիւն:

«Վերջերս հայերու կողմէն իրարու վրայ  
իզործ գրուած քաղաքական սպանութիւնները  
Հայ ժողովրդեան բոլոր բարեկամներուն ցաւի  
առիթ եղած են: Ես մը Ամերիկացիներ ան-  
միջապէս ըսին թէ այս բաները կը ցուցնեն թէ  
Հայերն անյարժար են ինքնավարութեան: Այս  
եղբայրացիութիւնը արդարաւոր չէ, որովհետեւ  
ամեն ազգաց մէջ ալ եղեռնագործութիւններ կը  
պատահին, և ամբողջ ժողովուրդ մը քանի մը  
անհատներու արարքին պատասխանատու ճանչ-  
նալ ուղիղ չէ և սակայն հասարակութեան զա-  
տելու կերպն այս է:

«Ստորագրեալքս Հայ կուսակցութեանց ո՛ր  
եւ է մէկուն հետ կապակցութիւններ չունենք սա-  
կայն իբր կուսակցութիւններէ զուր եղող ան-  
կումակայ անհատներ, և Հայ ժողովրդեան բա-  
րեք կամեցողներ՝ Հայերու զիբար սպանելը  
խտու կը գատապարտենք: Հայոց Ամերիկացի  
բարեկամները համակարծիք են թէ այսպիսի մե-  
թոտներ Հայ դատին միայն միտ կը հասցնեն,  
և մենք կը հաւատանք թէ բոլոր ազգաց էն լու-  
սամիտ գիւտնաղտներուն կարծիքն այս պիտի  
ըլլայ:

«Երբ ո եւ է հարստաբարձ կրկիր ազա-  
տութեան պաշտպաններն իրարու արեւն թա-  
փելու ջափ կատարութեամբ իրարու հետ կրուի  
կը բռնուին, այդ երկրին բարեկամաց միշտ  
ցաւ, և անոր թշնամեաց զնութիւն կը պատ-  
ճառեն: Հայաստան այսօր բացառութիւն մը չէ:  
Այս կողմ ստորագրած են՝ Է. Հ. Բլեմէնթ,  
Գոսթոն Թրէնարիֆիլի խմբագիր, Ճօրճ Թ.  
Հօր՝ Մէսի կողմէն Մերակուսական, Էտուրըտ  
Եվէրէթ, Հէյլ Տ. Տ. Սէմուէլ ձ Պէրով, Ալիս  
Սթոն Պէքուէլ:

## Տ Ի Ո Ւ Ր Պ Ա Ս Կ Ե Ր Ե Ր

Վա՛յ այն 60 տարեկան մարդուն որ,  
19 տարեկան աղջկան մը հետ կ'ամուսնա-  
նայ:

Վա՛յ այն աղքատ կնոջ որ գիշեր ցե-  
րեկ չարաչար աշխատելով՝ բնակած տան  
վարձքը տանտիրոջը խրկելու համար ան-  
մուսնոյն կուտայ որ տեղը չի հասցնիր...

Վա՛յ այն տիկնոջ որ՝ իրմէ աւելի գե-  
ղեցիկ սպասուէր կ'ունենայ:

Վա՛յ այն մարդուն որ՝ կինը ձգելով  
նորէն ամուսնանալ կուզէ:

Վա՛յ այն մարդուն որ՝ իր խենդ սը-

զուն խելքը դուրսը գալու համար կ'ա- կ'ամուսնացնէ:

Վա՛յ այն մարդուն որ՝ բռնակալու համար անօրի բռնիկը կը դիմէ:

Վա՛յ այն մարդուն որ՝ աղէկը կար- գելու համար միջնորդ կնիւն կը դիմէ:

Վա՛յ այն կնոջ որ՝ զիջելու միջնու- ժամը 12ր ամուսնոյն բազոսի տաճարէն դառնալուն կ'սպասէ:

Վա՛յ այն մարդուն որ՝ կնոջը խօսքե- րուն համոզելով բնակած յարկին մէջ ե- րիտասարդ պիտեալ իրաւնի կը դիմէ:

Վա՛յ այն զարգացեալ կնոջ որ՝ իր սոգէտ ու տրամար ամուսնոյն բերնէն ելած ան- ճառնի ու անհամ խօսքերը մտիկ կ'ընէ:

Վա՛յ այն քահանային որ, քարոզչու- թիւն, դասատուութիւն, ու ճրի մեռել թաղելով և երբեմն գրպանէն ալ ծախ- սելով հանդերձ, ջնջին ամուսնուցի մը կ'ըն- դունի:

Վա՛յ այն գրագէտ ուսուցիչ պատուա- կան դասին որ, թշուառութեան դէմ ազ- ցին օգտին համար շարադար մաքառելէ մերձը կը նահապետակօժի բաց... թաղու- մը... շատ փառաւոր... ծաղիկփունջե- րով... լալիան դամբանականներով... և արտասուական աչքերով ճանապարհը պան- ծաղիկը երգելով սեփ սեւ հողին կը յանձ- նուի այդ բազմախառ թանկագին մարդուն անարատ մարմինը:

Վա՛յ ինձ, վա՛յ ինձ որ, տյապէս կը տեսնեմ, և այսպէս ալ... կը գրեմ...:

ՍԱՐԳԻՍ ՓԱՔԱՋԵԱՆ Կնոջն

Ա.Ջ.Գ.Ա.ՅԻՆ

ԼՈՒՐԵՆ

ՄԻԹԻՆԿԸ

Ազգաս Բեմի 22րդ. թիւին մէջ կը կար- գանք թէ՛ անցեալ կիրակի Գահիրէի եկե- ղեցիին մէջ միթիւնի մը տեղի ունեցած է ինքերկայութեան 500 էն աւելի անձերու, բողոքելու համար Ռուսիոյ Զարին ուրազին դէմ, որով հայոց եկեղեցական կալուած- ները կը գրաւէ:

Միթիւնիկն նախագահած է կը գրէ Ա. զաս Բեմ, Գեր. Առաջնորդը, որ յանուն նոյն Ռուսի միթիւնիկն հետեւեալ հնազա- րը ուղղած է Վե՛ջ. ԿԱՌՈՂԻԿՈՍԻՆ:

ԹԵՐԹՕՆ ԱՐՇԱԼՈՍՍԻ

(15)

ՍԵՒ ԱԴԱՍԱՆԴԸ

Հեղինակ ՔԵՒՍԱՆ

ՄԱՍՆ ԱՊԱՆԻՆ

Ը.

ՅՈՒՍԱՅՍԵ

Հա՛մբի փողոցներուն մէջ ուր ժողովուրդը ա՛յնչափ գործունեայ և զուարթարար է, կը շրջագայէր Մարտիոյ յետոյ զգոյի նաւահան- գիտար ուղղուեցաւ, և հոն՝ նաւերու տես- քանները, անոնց բնաւորութիւնը, ուղեւորնե- րուն երթ ու գարծը, վարկեան մը հոնոյս պատճառեցին իրեն, յիշելով միանգամայն որ օր մը Իզապէլ ալ Հա՛մբի նաւահանգիստը եկած էր եւ ինք ու Ֆերնան անոր հետեւած էին Վրացա- ման այդ տասն եւ հինգ օրերուն մէջ Մարտիոյ

եղիպոսի հայ գաղարքը վստահ ըլ- լալով թէ՛ աչքային կայուններու խեղ- րոյն մեջ աշխարհ պիտի պաշտպանէ (հայ) եկեղեցիին դարաւոր իրաւունքները, կը խեղդէ որ ընդունի իր անկասկածի յարգանքները ու իրացումները:

Ազգաս Բեմի այս տողերը կարգաւ ա- տեն, պատահաբար ձեռքի տակ ունեցանք նաև Գահիրէի Առաջնորդարանին կողմէ այդ միեւնոյն միթիւնիկն համար հրատարակ հան- ուած պաշտօնական յայտարարութիւն մըն ալ, որով հրատարակ կը կարգաւորուէր Գահիրէի հայութեան հետեւեալ կերպով.

«Ռուսիոյ հայ եկեղեցեաց կալուածա- կան ծանօթ և յայտ ծանրակշիռ խնդրին համար՝ օգտակար և կարևոր դատուած է որ Եկեղեցոսի հայ ժողովուրդն ալ հաւա- քական խնդրագիր մը մատուցանէ ԱՌՎԵ- ՀԱՔԱՍ ԿԱՅՄՐԻ ՌՈՒՍՈՒՆՈՅ ևն. »

Պաշտօնական յայտարարութեան այս մէկ երկու տողերը միայն կարգաւորով, շատ դո՛չ մնացին որ՝ նոյն օրը ո՛չ Առաջնոր- դարանը (Իմա՛ Արքեպիսկոպիտ) մեզի լուր զըր- կել հասած է այդ մասին և ոչ ալ մեզմէ մէկը վերաբացած է այդ միթիւնիկն ներկայ- դատուելու: Ռուսիոյ հետեւ թէ՛ ըստ այդ պաշ- տօնական յայտարարութեան իմաստին, ուղ- ղակի ԱՌՎԵՀԱՔԱՍ ԿԱՅՄՐԻ ՌՈՒՍՈՒՆՈՅ հա- լաքական խնդրագիր մը զրկուելուն համա- միտ գտնուելինք, ուրացած պիտի ըլլայինք Ս. Եկեղեցոսի կաթողիկոսութեան դոյութիւ- նը, և Ն. Ս. Օծու թեան Վեհափառ Հայրապե- տին անձեռնադրելի իրաւաստութիւնները: Իսկ այս ահագին վնասներուն դէմ մեր ձեռք բերած օգուտը պիտի ըլլար, այդ- մտքով և այդ ծրագրով ճամբայ ելլող ձա- լաւէր միթիւնիկներուն հետեւած ըլլալու սխալէն յառաջ եկած սե արտօք:

ԱՐՇԱԼՈՍԻՆ

Այնքան դժբախտ մեզի կը գրեն թէ՛ ա՛ցեալ կիրակի օր, եկեղեցոյ աւարտու- մէն վերջ միթիւնիկ մը տեղի ունեցած է, Ռուս կառավարութեան կողմէ եկեղեցա- կան կալուածներու գրաւմանը դէմ բողո- քելու նպատակաւ:

Ատենախօսած են Տիարք Յ. Պեքար- եան, Մ. Տամատեան, Պեղիբեան, և յու- զիչ շեշտելով բացարձակ են ներկաներուն՝ օրհասական տաղանայը:

Միթիւնիկն արդիւնքը եղած է հեռա- գիր մը ուղղել Վե՛ջ Հայրապետին:

ՏԻՌՈՒՆԻ

Յուօք որով կը լսենք թէ՛ Գահիրէի Գալուսեան Ազգային Վարժարանի ուսուց- լու հիններէն Օր. Երմանէ Մկրտիչեան, որ վարժարանի արձակուրդին օգտուել ուղե- լով օգափութեան թեան դացած էր Աղէքսան- դրիա, հիւանդանոցին մէջ մեռած է և անց-

եալ շարժով օրը կատարուած է թաղման արարողութիւնը:

Օրինորդ Երմանէ լու դաստիարակուած էր և շատ փայլուն ապագայ մը կը խոստա- նար, եթէ մահուան անողորմելի ճիւղանե- րուն տակ չիջնար այսչափ շուտ:

Օրինորդ Մկրտիչեան իր շրջանը աւար- տելէ վերջ Իսկիւտարի Մէղպուրեան վար- ժարանին մէջ, Գահիրէ եկած էր իր ծնո- ղաց ըով. և կարծենք՝ 1894-95 թուական- ներուն էր որ իր ուսման ծրարը յարե- ցնելու համար Զարիցերիոյ Լոզան քաղաքը մեկնեցաւ, ուրկէ վերադարձաւ մտային բաւական կարեւոր միթերքով մը:

Օրինորդ Երմանէ Մկրտիչեանի, որ այ- ժմ հոգաբարձ մ'է այլ ևս, ապագայ ծը- րագիրներուն և գաղափարներուն եթէ ան- ձամբ ծանօթ չ'ընէինք, թերեւս նաւազ վիշտ պիտի պատճառէր մեզի անոր այս վաղահաս մահը:

Մեր ցաւակցութիւնները ուրեմն հան- դուցելոյն մօրը. քրոջը, եղբորը, քեռայ- րին և իր մահը օղբացող բոլոր աղբական- ներուն և բարեկամներուն:

Կը լսենք թէ՛ Պատ. Խնամակալու- թեան Ատենապետը, Ն. Վեհափառ Ար- ղաւաճ Բաշա Բարիթոզ, Օր. Մկրտիչեանի թաղման օրը ընկերացած է դադաղին մի- չեւ դերեղանատուրը:

Երբ Ն. Վեհափառ Ռուսիոյ մտաւորական կա- թողութիւնները այսպիսի գնահատել զիտէ, ալ չենք հասկնար թէ՛ մեր ազգին գլուխը գտնուողներէն դեռ ինչքո՞ւ ունինք պա- հանջելու որ մերք ալ զանոնք դնահատել զիտանք:

Այս մասն ալ Աղէքսանդրիոյ Բոժոժ իկին խորհրդածութեանց պէտք է թաղուլ:

ՏՐ. ԹԱՄԱՐՅՈՅ

Գահիրէ նոր հաստատուած Հայ Բժիշկ- ներէն Տր. Ս. Թահմիզօթ անցեալ շարժու- յանկարծակի մեռաւ, իր վրայ արդէն բոյն դրած հիւանդութեան մը հետեւանք:

Հանգուցեալ Տօքթօրը իրեններէն մի- այն բոլոր ունէր իր մահուան անկողնոյն ըով-Օր. Նարկիզ Թահմիզօթ - որ Պօլսոյ ա- ղէտալի դէպքերէն ի վեր Պուլկարիա և անկէ Եգիպտոս միասին ճարտարած էր լու- նամուլու համար իր սիրելի եղբայրը, և այ- սօր ցաւալի է ըսել անոր դառնալէտ մահը կողբայ պանդխտութեան մէջ:

ՄԻՄՈՆԱՔ

Արքայադէպի Հիւրիզիոյ տարեշրջանը Օգոստոս 1ին սկսուած է և դեռ քիչերը ի- րենց բաժանորդագիրը զրկելու հաճած են: Առանձին զիմուսներ ընկու համար ժամանակ չունինք: Թերթին կանոնաւոր

Օրը զեղեցիկ էր՝ երկինքը մոռնող ամ- պի հետք մը անգամ չ'կար՝ միայն շատ ցուրտ կ'ընէր: Այնքը այնչափ վճիռ էր, որ մարդ հորիզոնին ամէն կէտերուն վրայ շատ հեռու- էն կարող էր զանազանի զգոյի նաւահան- գիտար համակիտող նաւերն ու ստապատուար- ները եւ միւս կողմանէ ծովին հանգարտութե- նէն օդատելով անկէ մեկնողները: Մարտիոյ իր մօտը դառնող նաւահանգստի լայն անցքէն, ամէն ուղղութեան վրայ յառաջանալը կը դի- տէր անոնց՝ որոնք ստակաւ առ սակաւ այն- չափ կը պոպկոպային: մինչև որ զիտողին աչ- քին ուրիշ բան չէր երեւար այլ ևս, այլ մի- այն շողոմանէրէն բարձրացող սիւնակալեւ ծուխը, և առաջատանաւերու հարթակայները, օրգապէլ այնչափ կը սիրէր այս տեսա- րանը, կ'ըսէր Մարտիոյ իւրովիս:

Մարտիոյ հասալով, մասնաւոր ուշու- դութեամբ մը իր նախաձեռնող ուղղեց հորիզո- նին ա՛յն կէտին վրայ, ուր երկինքը և ծովը իրարու կը միախառնուէին ամբողջ կապոյտ գիծով մը: Հոն՝ նաւերը ուրիշ բան չէին, բայց ինքն փոքրիկ կէտեր՝ որ քիչ յետոյ յանկարծ բողբոլին կ'անհետանային:

Մարտիոյ կէս օրին յետոյ՝ զրեթէ ամբող- ջովին, ակնասլի ծովը գիտելով անցուց. եւ երբ մուլը կոխել սկսաւ, հաւանազիտէն բաժ- նուելով Հալը կարգաբաժաւ և ուղղուեցաւ դէ- քստարակութիւնը ապահովելու համար Զեր բաժանորդագիրները ինքնաբերաբար փութացնելու մի՛ մոռնաք:

հրատարակութիւնը ապահովելու համար Զեր բաժանորդագիրները ինքնաբերաբար փութացնելու մի՛ մոռնաք:

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Որչափ մեր բարեգործութեանց սահ- մանները ընդարձակ ընենք՝ այնչափ պէտ- քը կայ անոր: Հայ ազգին կարող անհաս- ները պէտք է որ միշտ բաց պահեն իրենց քսակին բերանը, մանաւանդ այս վերջին տարիներուն համար:

Եթէ կուզենք մեր բարութեան և ա- ռարիւթեան գեղեցիկ օրինակները տալ, առիթները ներկայանալու պահուն պէտք է ամենէն անո՞ք մեր արձանագրելու մեր անունը բարեգործութեանց ցուցակին մէջ:

Ներկայ պարագաներուն մէջ մանաւանդ բաւական չեն աղբատնայնամիտութեան օր- սահմանները, անոնք մէկ անձի ներ- կան միայն փրկելու համար 50էն 100 զուլի դուժարէ մը աւելի չեն կրնար տարաբար, այս պարագան անհիշատելի անցնելու չէ:

Վերջերս, իր բողբոլէն հալածուած աղբային մը պէտքը կ'ըզգայ իր արիւնա- կիցներուն դժբախտները և երկու բարեւեր աղբայինները ալ՝ այդ պէտքը տեսած և ի- րենց աշակցութիւնը նուիրել որոշած են յիշտալ բողբոլաւորին: Երբ անոնք մե- ղի գիծին, չ'մոռնանք մեր տառապանե- նութեամբը քաջալերել իրենց անձնուէր լանքերը:

Տիար Մկրտիչ Փոփոզեան և Բազա- րատ Եօրտամեան, իրենց վրայ տած են զժբարդ աղբայինոյ մը վշտերը անձրեւոյ հոգը, բայց անոնց աշխատութիւնը մեր նուերներուն միանալով եւեթ կրնայ ար- զունաւոր ըլլալ:

Մն, ուրեմն, տեսնենք թէ՛ մերա- լայն պիտի կրնայ նուիրատուներու կու- ցուցակ մը հրատարակել, և միթիւնուած տեսնել աղբային մը, որ երբեմն առաջի- նը եղած է իրեն նմաններուն նիւթապէս և բարոյապէս օգնելու գործոց մէջ:

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՆ

ՄԻՋԱՊԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Երեկ երեկոյ Ռուսիոյ Գահիրէի Մի- ջապային Գործակցական ընկերութեան առաջին Ընդհ. Ժողովը տեղի ունեցաւ: Անդամներէն 44 հոգի - երեք հայ մի- այն ներկայ էին և օրակարգին համաձայն արագրեալ կանոնադրել ընկերցման տըր- ուեղէ յետոյ՝ Գործադիր Վարչութեան մը ընտրութեան ձեռնարկուեցաւ:

Երեկ երեկոյ Ռուսիոյ Գահիրէի Մի- ջապային Գործակցական ընկերութեան առաջին Ընդհ. Ժողովը տեղի ունեցաւ: Անդամներէն 44 հոգի - երեք հայ մի- այն ներկայ էին և օրակարգին համաձայն արագրեալ կանոնադրել ընկերցման տըր- ուեղէ յետոյ՝ Գործադիր Վարչութեան մը ընտրութեան ձեռնարկուեցաւ:

Երեկ երեկոյ Ռուսիոյ Գահիրէի Մի- ջապային Գործակցական ընկերութեան առաջին Ընդհ. Ժողովը տեղի ունեցաւ: Անդամներէն 44 հոգի - երեք հայ մի- այն ներկայ էին և օրակարգին համաձայն արագրեալ կանոնադրել ընկերցման տըր- ուեղէ յետոյ՝ Գործադիր Վարչութեան մը ընտրութեան ձեռնարկուեցաւ:

Երեկ երեկոյ Ռուսիոյ Գահիրէի Մի- ջապային Գործակցական ընկերութեան առաջին Ընդհ. Ժողովը տեղի ունեցաւ: Անդամներէն 44 հոգի - երեք հայ մի- այն ներկայ էին և օրակարգին համաձայն արագրեալ կանոնադրել ընկերցման տըր- ուեղէ յետոյ՝ Գործադիր Վարչութեան մը ընտրութեան ձեռնարկուեցաւ:



